«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

Հաստատություն՝ Երևանի թիվ 96-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Գևորգյան Մարիամ

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն…… …… 3

Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում…… 4

Պարապմունք…… 8

Եզրակացություն…… 12

Գրականություն…… 15

Ներածություն

«Երեխայի հետ շփման ժամանակ մշտապես դրսևորեք լավ վարքագիծ, փոխանցեք նրանց ձեր մեջ եղած դրականը»:

Մարիա Մոնթեսորի

Մանկությունը մարդու զարգացման կարևորագույն փուլերից է: Կյանքի հենց առաջին շրջանում անփոխարինելի է նկարչության դերը: Նկարչությունը ունի կախարդական ազդեցություն, այն կարողանում է երջանկացնել մարդկանց, երեխաների հոգիները լցնել դրական հույզերով:

Նկարչությամբ հատկապես տպավորվում են նախադպրոցական տարիքի երեխաները:

Նկարչությունը՝ երաժշտության և կերպարվեստի գունային ամբողջություն է: Այն նպաստում, պայմաններ է ստեղծում անհատի ամբողջական դաստիարակության համար, ինչպես նաև ինքնաարտահայտման և միաժամանակ հոգեբանական լարվածության վերացման միջոց է: Նկարչության ընթացքում կատարելագործվում են բոլոր հոգեկան ֆունկցիաները՝ տեսողական ընկալում, պատկերացում, երևակայություն, հիշողություն, մտածողություն:

Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում

Մեր շրջապատում, բնության մեջ մենք հանդիպում ենք շատ հետաքրքիր և գեղեցիկ առարկաների և երևույթների:

Շրջապատող առարկայական աշխարհում մենք հիանում ենք նաև մարդու ձեռքի և մտքի ստեղծագործություններով:

Կերպարվեստը նախադպրոցական տարիքի երեխայի գեղարվեստական դաստիարակության կարևոր միջոցն է:

Մանկապարտեզում նկարչական գործունեությունը կարելի է կազմակերպել ավանդական և ոչ ավանդական մեթոդներով:

Ոչ ավանդական մեթոդով նկարչությունը երեխաներին հնարավորություն է տալիս խաղալով ծանոթանալ պարզագույն նյութերի տեսակներին և դրանց հատկություններին:

Նա կարող է նկարել տարբեր միջոցներով՝ խցանով, տերևով, գունավորած մատիկներով, թելերով, կարտոֆիլով, ձվի կեղևով և օգտագործել տարբեր նյութեր՝ լրագիր, ափսե, ծառի տերև, գունավոր կամ սպիտակ թղթեր:Նա ազատ է նյութերի, ժամանակի և տարածության ընտրության մեջ:

Երեխան աշխատելով ոչ ավանդական մեթոդներով՝ կարող է ստանալ պատկերներ հարթ և անհարթ մակերեսի վրա (փուչիկ, ասվալտ, պատ և այլն): Ձևերի և միջոցների բազմազանությունը նոր խնդիր է առաջ բերում և ստիպում փոքրիկին շրջանցել խոչընդոտներն ու անընդհատ հորինել ինչ-որ բան:

Ոչ ավանդական մեթոդով նկարչությունը գործունեության այն լավագույն ձևերից է, որը հնարավորություն է տալիս հաղթահարել նկարչության հանդեպ վախը՝ թե ոչինչ չի ստացվի: Դրա համար կարելի է կիրառել տարբեր ձևեր և միջոցներ:

Տարբեր ձևերով և միջոցներով ստանալով զվարճալի պատկերներ՝ երեխան մտածում է, որ իր կատարած աշխատանքն ամենալավն է ու ամենագեղեցիկը:

Ավարտելուց հետո նա կարող է առանձնացնել իր կատարածը մի քանի այլ աշխատանքների մեջ և ներկայացնել առանձնահատուկ շեշտադրումով: Երեխաներին հետաքրքրում են ոչ միայն աշխատանքի ընթացքը, այլև վերջնական տեսքը և դաստիարակի խրախուսական խոսքը: Սակայն ինչպիսին էլ լինի ստացված պատկերը, միևնույն է, երեխայի կողմից կատարած աշխատանքն իր իսկ զգայական ընկալման վերարտադրումն է, որն առաջին հերթին ուրախություն և հրճվանք են պարգևում հենց իրեն:

Պարապմունքների նպատակն է զարգացնել երեխայի ստեղծագործական և կառուցողական մտածողությունը նաև լուծել հետևյալ կարևորագույն խնդիրները.

- Սովորեցնել տեսնել, դիտել, զգալ շրջապատող աշխարհը:
- Հարստացնել զգայական փորձը՝ տեսողական, լսողական, շոշափելիքի զգացողությունը:
- Կարողանալ բնութագրել առարկաների հարաբերությունը միմյանց նկատմամբ:
- Զարգացնել առարկաները և երևույթները տեսնելու, դիտելու, համեմատություններ և վերլուծություններ կատարելու, դրանց նմանություններն ու տարբերությունները գտնելու, ընդհանրացումներ անելու ունակությունը:

Յուրաքանչյուր երեխա ճանաչելով իրեն շրջապատող աշխարհը, փորձում է այն արտացոլել իր գործունեության մեջ:

Խաղի մեջ, պատմվածքներում, նկարչության մեջ և այլն: Ստեղծագործական գործունեությունը հիանալի հնարավորություններ է տալիս այս առումով: Որքան բազմազան լինի ստեղծագործական միջավայրի ձևավորմանը նպաստող պայմանները, այնքան ավելի վառ կդրսևորվեն երեխայի գեղարվեստական կարողությունները: Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը լայն շրջանակ է բացում երեխաների երևակայության համար, հնարավորություն է տալիս երեխային ներգրավվել ստեղծագործության մեջ, զարգացնել երևակայությունը, ցուցաբերել անկախություն և նախաձեռնություն, ցույց տալ իրենց անհատականությունը:

Ոչ ավանդական նկարչության տեխնիկան հիանալի միջոց է փոքրիկ գլուխգործոցներ ստեղծելու համար:

Այս ոչ ավանդական տեխնիկաներից յուրաքանչյուրը փոքրիկ խաղ է երեխայի համար: Այս տեխնիկայի օգտագործումը թույլ է տալիս երեխաներին ավելի հանգիստ և համարձակ զգալ, ավելի ինքնաբուխ:

Այս տեխնիկան զարգացնում է երևակայությունը, տալիս է լիակատար ազատություն ինքնաարտահայտման համար:

- Նկարել ձողիկով
- Նկարել օճառի պղպջակով
- Նկարել ճմռթած թղթով
- Նակրել ականջի փայտիկներով
- Նկարել աղով
- Նկարել սպունգով

Հետազոտական աշխատանքը կատարելիս ուսումնասիրել և հասկացել եմ, որ ոչ ավանդական տեխնիկայով աշխատելը լայն շրջանակ է բացում երեխաների երևակայության համար, տալիս է երեխաներին հնարավորություն ներգրավվել ստեղծագործության մեջ, ցուցաբերել անկախություն և նախաձեռնողականություն, լինել ավելի հանգիստ և համարձակ, լիակատար ազատ՝ ինքնաարտահայտման համար:

Ներկայացնում եմ պարապմունքի պլանը:

Պարապմունք

Ոչ ավանդական նկարչություն

Տևողությունը՝ 25-30ր.

Ծրագրային բովանդակություն –Ոչ ավանդական մեթոդներով «Տոնածառ» նկարելու միջոցով՝ սովորեցնել երեխաներին ստեղծել ռիթմիկ կոմպոզիցիաներ:

Ցույց տալ նկարելու տարբեր եղանակները համադրելու հնարավորությունները (սպունգ, ձեռքի ափ, ականջի փայտիկ, ճմռթած թուղթ, ատամի խոզանակ):

Զարգացնել ռիթմի և կոմպոզիցիայի զգացողությունը:

Նպաստել ձեռքի հմտության զարգացմանը, ստեղծագործական մտքի և գեղագիտական ճաշակի խորացմանը:

Պարապմունքի նպատակը –Շարունակել սովորեցնել երեխաներին նկարելու տարբեր եղանակները համադրելու հնարավորությունը, տարբեր մեթոդներով աշխատելու ցանկությունը և ցանկացածը իրականացնելու ունակությունը:

Նպաստել աշխատանքը մինչև վերջ ավարտին հասցնելու կարողության զարգացմանը;

Նպաստում է նաև աշխատանքի ընթացքում ընկերական փոխհարաբերությունների ամրապնդմանը,իր աշխատանքը դիմացինի հետ համագործակցելու, միասնական աշխատելու և համատեղ արդյունքների հասնելու ունակությանը:

Նպաստում է կոկիկ աշխատելու ունակության զարգացմանը:

Պարապմունքի անհրաժեշտ նյութերը –խմբասենյակում ստեղծել գեղեցիկ, ձմեռային մթնոլորտ՝տարբեր պաստառներ, զարդարված եղևնի, սեղաներին՝գուաշ, թուղթ, ջուր, սպունգե բարձիկներ, փայտիկներ, փափուկ ճմրթված թղթիկներ, վրձիններ, ատամի խոզանակ, ծամկալ, անձեռոցիկ:

Ա. Գրիգորյանի «Նոր տարի» երգը:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները կիսաշրջան նստած են գորգին:

Հուզական տրամադրություն ստեղծելով տալ հետևյալ հարցերը

- Երեխանե՛ր, այժմ տարվա որ եղանակն է:
- Ձմռանը ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում բնության մեջ(հաստատել և ճշտել երեխաներ իդրական պատասխանները)
- Իսկ հիմա կառաջարկեմ հանելուկ

  Կանաչ ու շքեղ
  Այդ լույսերի տակ
  Ձմեռ պապիկը
  Նվեր է դնում,
  Հենց ժամացույցի
  Զարկերն են խփում
  Գույնզգույն, սիրուն
  Լույսեր են վառվում:
  (Տոնածառ)

- Այո՛, երեխաներ, դուք ճիշտ գուշակեցիք, խոսքը տոնածառի մասին է:
- Իսկ ինչպիսի՞ ծառ է եղևնին (մշտադալար,կանաչ,)
- Այո՛ երեխաներ, եղևնին տարին տասներկու ամիս կանաչ է, իսկ ամանորին մեր տների զարդը:

– Իսկ այժմ եկեք թվարկենք, թե ինչեր են դրված սեղաններին. (գուաշ, թուղթ, սպունգ, խոզանակ, փայտիկներ…)
– Ուրեմն մեզ մոտ ի՞նչ պարապմունք է
– Այո՛ երեխաներ, այժմ մեզ մոտ նկարչության պարապմունք է, բայց ոչ սովորական, այլ ոչ ավանդական նկարչության:

Երեխաներ այսօր աշխատելու ենք ենթախմբերով, մոտեցեք և ուշադիր նայեք, թե ինչ նյութեր և միջոցներ են դրված սեղաններին:

Այնուհետև կատարել ֆիզ. դադար

Հորիզոնն է մթնել
Պաղ անձրև է սկսել,
Սիրում ենք զբոսնել
Ջրափոսերը մտնել,
Հովանոցը վերցնեմ
Անձրևի տակ պտտվեմ,
Ջրիկի հետ խաղ բռնեմ
Ջրափոսերը շրջանցեմ:

Որից հետո միացնել Ա. Գրիգորյանի «Նոր տարի» երգը և երեխաներին առաջարկել մոտենալ այն սեղաններին, որ նյութերով ու միջոցներով նրանք նախընտրում են աշխատել:

Հետևել, որպեսզի երեխաները աշխատեն լուռ, համերաշխ, միմյանց զիջելով, ճիշտ կիրառեն նյութերով աշխատելու տեխնիկան:

Հետևել, որպեսզի նախապես որոշեն ինչպես պետք է աշխատեն և տեխնիկապես ճիշտ կիրառեն նյութերը: Ընթացքում շրջել և հետևել երեխաների աշխատանքները:

Աշխատանքը ավարտելուց հետո՝ ավարտված աշխատանքները փակցնել գրատախտակին և կատարել քննարկում:

– Եկեք քննարկենք, թե որ աշխատանքն է ձեզ դուր գալիս:
– Ինչպե՞ս աշխատեցիք, աշխատանքի ընթացքում ի՞նչ զգացիք, ո՞ր աշխատանքն է բնականին ավելի մոտ:

Հարցը տալ բոլորին, պատասխան ստանալ մի քանի երեխաներից:

- Այո՛ երեխաներ, աշխատելու ընթացքում ես տեսա, թե ինչ հաճույքով, ոգևորված, ուրախ էիք աշխատում: Այդ իսկ պատճառով աշխատանքների արդյունքները հրաշալի են ստացվել, իրականին մոտ:

  Ես առաջարկում եմ, որպեսզի ձեր աշխատանքները ցուցադրենք ծնողական անկյունում, որ ձեր մայրիկներն էլ կարողանան հիանալ այդ աշխատանքներով:

Պարապմունքն ավարտված է:

Եզրակացություն

Ինձ համար այլընտրանքային նկարչությունը անականկալներով լի մի հիանալի աշխարհ է, որտեղ խոսում են ձեռքերը, և ձեռքերի միջոցով արտահայտվում է ներքին ասելիքը, հոգևոր ու տրամադրությունը:

Որպես ամփոփում, կարելի է ասել, որ այլընտրանքային նկարչությունը, հնարավորություն է տալիս երեխային խաղաղվել, հանգստացնել ներքին բացասական հույզերը, չարտահայտված տագնապները, օգնում է հաղթահարել բարդույթները, վախերն ու սթրեսները:
Քանի որ այլընտրանքային նկարչության ընթացքում երեխաների մոտ այնքան դրական հույզեր, էներգիա, հիացմունք, հրճվանք ու բարձր տրամադրություն է տիրում, որ անհետանում են վերը թվարկված բացասական կողմերը:

Այլընտրանքային նկարչության խնդիրներն են՝

- Զարգացնել նկարելու հմտությունները
- Ծնել սեր նկարչության նկատմամբ
- Սովորեցնել խմբաբին աշխատանքի կազմակերպումը
- Սովորեցնել լինել համբերատար, բաբց ազատ գործողությունների մեջ
- Զարգացնել գեղագիտական ճաշակ
- Նպաստել երևակայության զարգացմանը
- Զարգացնել վերլուծական և ստեղծագործական մտածողությունը
- Ընդլայնել երեխայի մտահորիզոնը

- Ընդլայնել երեխայի ինքնաարտահայտման միջոցները առաց որոնց չի կարելի պատկերացնել մարդու որևէ գործողություն

Հետևելով երեխաների ոգևորված աշխատանքին, նկատումենք, որ այլընտրանքային նկարչությունը օգնում է արտահայտել այն մտքերը ու ապրումները, որոնք դժվար է ձևակերպել բառերով, այսինքն՝երեխաների համար այն ինքնահաստատման միջոց է, որը երեխային թույլ է տալիս լինել ազատ, ինքնուրույն, ազատվել ներքին զգացմունքներից և ակտիվացնել երևակայությունն ու հիշողությունը:Արդյունքում նկարչությունը երեխային ստեղծագործ է դարձնում ՝ն պաստելով գեղեցիկը զգալու, տեսնելու, ընկալելո, ըմբռնելու և դրանով հիանալու կարողությունը:

Ինչպես նաև, նկարչությունը զարգացնող դեր ունի երեխայի տեսողական, շարժողական, կոորդինացիայի, խոսքի, մտածողության, երևակայության, մտավոր ունակությունների, նյարդային համակարգի ճիշտ զարգացման գործում, քանի որ նկարելու ընթացքում աշխատում են երեխայի տեսողական, շարժողական, մկանային, շոշափողական վերլուծիչներ:

Ուսումնասիրելով մատնանկարչությունը՝ որպես ոչ ավանդական նկարչության միջոց ,երբ երեխաները իրենց մատիկներով ստանում են գեղեցիկ պատկերներ, տեսնում ենք ,որ դրանով հղկվում է նրանց ձեռքի շարժումները, զարգանում է մանր մոտորիկան:

Մանր մոտորիկան մարդու կորդինացված գործողությունների ամբողջությունն է ուղղված ձեռքերի բազուկների, ձեռքերի մատների մանր ճշգրիտ գործողությունների կատարումն է: Մոտորիկան անմիջականորեն խթանիչ է հանդիսանում կենսական շատ կարևոր համակարգերի կայուն զարգացման համար:

Դրանք են՝

- Իմացական գործընթացները
- Ուշադրությունը
- Երևակայությունը
- Մտածողությունը
- Խոսքի ձևավորումը

Գիտնականներն ասում են , որ ուղողում գտնվող խոսքի և մոտորիկայի զարգացման համար պատասխանատու կենտրոնները շատ մոտ են: Հետևաբար մյուսի գրգռումը խթանում է հաջորդի զարգացումը:Խոսելու կարողությունը կախված չէ միայն բերանային ապարատի գործառությունների հետ: Յուրաքանչյուր գործառույթ մեր օրգանիզմում իրականանում է մեր ուղեղի հրահանգով:Եվ եթե երեխայի մոտ հապաղում է խոսքը դա կարող է լինել մոտորիկայի ցածր զարգացման արդյունքում:

Զարգացնելով երեխայի մանր
մոտորիկան՝մենք ակտիվացնում ենք նրա ուղեղի աշխատանքը,
խթանում նրա խոսքի, մտածողության, տրամաբանության զարգացմանը:

Այստեղից հետևություն, նկարչության միջոցով զարգացնելով մանր մոտորիկան, նպաստում ենք երեխայի խոսքի զարգացմանը:

Գրականություն

- Մանկապարտեզի ավագ խմբի (5-6տ.) կրթական համալիր ծրագիր, Երևան 2007թ.
- Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում (ուսումնական ձեռնարկ), Երևան 2016թ.
- ,,Ոչ ավանդական նկարչություն.. Մեթոդական ձեռնարկ, Ժ. Ավետիսյան, <<Էդիթ Պրինտ>>, հրատ. 2020թ.
- Նախաշավիղ 1., 2013թ.
- Համացանց